

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Ե Ր

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1909—1910 թականի

63(062)
S-30

ԹԻՖԼԻՍ

Բաժանմունք «ՊՐՕԳՐԷՍ» տպարանի, Դվորցյ., տ. Վրաց. Ազ.

1910

63(062)

S-30

1-3

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Ե Ր

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1909—1910 քաղկանի



ԹԻՖԼԻՍ

Բաժանմունք «ՊՐՕԳՐԷՍ» տպարանի, Դվորց., ա. Վրաց. Ազ. 1910

12 AUG 2013

14947



1909—1910 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Վ Ի Ր

«ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»

1. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ուղիղ մի տարի առաջ—այն է 1909 թվի մայիս 28-ին հայացաւ «Թիֆլիսի հայ Գիւղասնտեսական և Տնայնագործական ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը:

Սա մի նոր ընկերութիւն չէր, այլ «Թիֆլիսի հայ Տնայնագործական ընկերութիւնը», որի անդամները աչքի առաջ ունենալով այն, որ ընկերութիւնը գործելու է գիւղերում և մեծ մասամբ գիւղացիներին համար, ցանկութիւն էին յայտնել, որ ընկերութիւնը իր գործունէութեամբ աւելի մօտ կանգնէ մեր երկրի գիւղասնտեսական կեանքին, ուստի և կանոնադրութեան մէջ մտցնում են մի շարք նոր կէտերը; անում են փոփոխումներ և ներկայացնում իշխանութեանը ի հաստատութիւն:

Ընկերութեան նոր կանոնադրութիւնը 1909 թվի ապրիլի 2-ին հաստատուում է Թիֆլիսի պ. նահանգապետի կողմից, տպագրւում և ահա 1909 թվի մայիսի 28-ի ընդհանուր ժողովում որոշուում է գործել այսուհետև համաձայն այս նոր կանոնադրութեան:

Որչափ և նոր կանոնադրութեան մէջ շեշտած էին ընկերութեան նպատակն ու գործունէութեան եղանակները, այնուամենայնիւ նոյն ժողովի մէջ ընկերութեան նախագահ Ա. Քարանթաճը մի յատուկ զեկուցման մէջ հետևեալ կերպով է բնորոշում ընկերութեան ապագայ գործունէութիւնը:



181-961 2013-99

«Այսօրւանից սկսուած է Հայ-Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան գործունէութեան երկրորդ շրջանը:

«Ընկերութիւնը մինչև այժմ իր զբաղմունքները գլխաւոր մասը նւիրում էր տնայնագործութեան, իսկ այսօրուհետև ընդարձակուած է իր գործունէութեան գիւղատնտեսական մասը, աշխատելով բաւարարութիւն տալ գիւղացու երկու խոշոր տնտեսական պահանջներին՝ գիւղատնտեսական և արհեստագիտական:

«Երկու տարի մենք զբաղւեցինք տնայնագործական խնդիրներով, այսօր մեր առաջ դրւած է գիւղատնտեսական արդիւնագործութեան զարգացման հարցը:

«Գիւղատնտեսական գիտելիքները կարող են տարածւել զանազան ձևերով՝ խօսքով, գրով, ցուցափորձերով և գործնական տնտեսութիւններ կազմակերպելով: Եւ անշուշտ պէտք է սկսենք նրանց իրագործել, որքան այդ կնիքներն մեր միջոցները՝ ընդարձակած չափերով:

«Մօտքը՝ զրոյցի, դասախօսութեան և խորհրդակցութեան ձևով կպահանջի մեզնից մասնագէտների գործակցութիւն, որոնք շրջէին գիւղեր, խորհուրդներ ու խրատներ տալին՝ տնտեսութիւնը բարեկարգելու և ծանօթացնէին երկրագործ ժողովրդին գիւղատնտեսական արդիւնաբերութեան այն կատարելագործութիւնների հետ, որոնք գործադրելի կարող են լինել նրա կեանքում:

«Գրական խօսքը մենք կարող ենք տարածել բրօշուրների, պարբերական թերթի, ալբոմների միջոցով, և դրա համար պէտք է ձեռնարկենք մի շարք հրատարակութիւնների: Այս տարի կարող ենք փորձել՝ տալ բրօշուրներ մի քանի մասնագիտութիւններից, որոնց վերաբերութեամբ պահանջը աւելի զգալի է:

«Ցուցափորձը, գործնականապէս ցոյց տալով որոշ գործիքի և մեքենայի գործողութիւնը և շօշափելի կերպով ծանօթացնելով տեխնիկական այս ու այն եղանակները և կատարելագործութիւնների հետ, կտայ կարողութիւն

գիւղացուն անմիջապէս գործադրելու իր տեսածն ու սովորածը իրականութեան մէջ:

«Մենք կարող էինք օգտուել կաթնատնտեսական «ժամանակաւոր այն Դասընթացներից», որոնք պէտք է գործեն այս տարի Զարաքիլիսայում, կազմակերպելու սիստեմական ցուցափորձեր նաև գիւղատնտեսութեան միւս ճիւղերից. օրինակ մեղաբուծութիւնից, թռչնապահութիւնից, պտղաբուծութիւնից և հողագործութիւնից: Միևնոյն ժամանակ կարելի է կազմակերպել ցուցադաշտեր և գիւղերում:

«Գործնական տնտեսութիւններ կազմակերպելը, անշուշտ, ամենաշօշափելի և համոզիչ ձևը կլինէր գործունէութեան որոշ տեղի համար և պէտք է աչքի առաջ ունենանք իրագործելու նրանց ուր հնարաւոր կլինի: Այստեղ մեզ կաշակցեն անշուշտ նաև մեր ճիւղերը:

«Եթէ գրանց աւելացնելու լինենք դպրոցական կրթութեան զանազան եղանակները, հրաւիրենք հրահանգիչներ կամ շրջիկ վարպետներ, կազմակերպենք ցուցահանդէսներ, և խորհրդակցական ժողովներ, նպաստենք վաճառահանութեան գործին, հաստատենք բիւրօներ, գործակալութիւններ, պահեստներ, այն ժամանակ կարելի է վստահ լինել, որ մենք կարող կլինենք յուսալ մեր ընկերութեան բարբար ազդեցութեան վրայ՝ մեր երկրի իրականութեան բարւոքման համար:

«Եթէ ցանկանայինք մի առ մի թւել գիւղատնտեսութեան այն ճիւղերը, որոնց վերաբերութեամբ մենք պէտք է հոգատար լինենք, մենք ստիպւած կլինենք հրապարակի վրայ դնել բոլոր ճիւղերը, որովհետև մեր երկրի բազմազանութիւնը տալիս է հնարաւորութիւն աճեցնել և պահել մեր երկրում ամեն տեսակ բոյս և կենդանի:

«Մենք այստեղ կյիշատակենք միայն գլխաւոր կէտերը:

«Հողագործութեան խնդիրը դնում մեր առաջ հացաբոյսերի, խոտաբոյսերի, իւղաբոյսերի, թելաբոյսերի, ծխախոտի, գետնախնձորի և ուրիշ արմատների մշակու-

թեան կատարելագործութիւնների անհրաժեշտութիւնը: «Այգեգործութիւնը հանդէս է բերում մեր պտղաբուծութեան, վազապահութեան, գինեգործութեան, միրգ չորացնելու և կօսսերւի ձևով պահելու խնդիրները:

«Մեր երկիրը, որ այնքան հարուստ է արօտներով և յիշեցնում է Շւէյցարիայի նոյնատեսակ շրջանները, հերթական է դարձնում Ալպիական Տնտեսութեան զարգացումը:

«Թէ այդ արօտների և թէ ուրիշ պայմանների ներկայութիւնը մեծ տեղ է տալիս մեր երկրի տաւարապահութեան զարգացմանը, որին վիճակւած է մեծ ապագայ: Թէ խոշոր և թէ մանր եղջիւրաւոր կենդանիների խնամելը և շահագործելը, թէ թռչնապահութիւնը, խոզաբուծութիւնը, ձիաբաժութիւնը կարող են ունենալ իրանց զարգացման համար յարմարութիւններ մեր երկրում:

«Անասնապահութեանը ուղեկից է և՛ կաթնատնտեսութիւնը, որն արդէն ոտք է դրել կատարելագործութիւնների շաւղի վրայ մի քանի շրջաններում:

«Անշուշտ մեծ են շրջանները մեղաբուծութեան և շերամապահութեան համար, որոնք տալիս են զգալի եկամուտ մեր գիւղատնտեսներին:

«Իրանց հետ միասին պէտք է առաջ տանել ֆլասակար բոյսերի և կենդանիների զանազան հիւանդութիւնների դէմ մաքառելու անհրաժեշտութիւնը, որ հերթական նշանակութիւն է ստացել կեանքի մէջ:

«Աւելացրէք այդ բոլորի վրայ ոռոգման կարևոր խնդիրը, գործիքների տարածման կազմակերպութիւնը, անտանների շահագործութիւնը, հողային կարգերի, ընկերակցութիւնների կազմակերպութեան գործը, կրեդիտային հիմնարկութիւնները մտցնելու, վիճակագրութեան կազմակերպելու և զանազան տեսակ ուսումնասիրութիւնների խնդիրները, և մենք կունենանք մի ընդարձակ ասպարէզ գործունէութեան, որը կպահանջի մեզնից մեծ միջոցներ և գործողների շարքեր:

Մենք, անշուշտ, պէտք է աշխատենք լուրջ և հիմնաւոր կերպով կատարել այն, ինչ որ անում ենք, որպէսզի սխալները չվարկաբեկեն կուլտուրական առաջադիմութիւնների գործը:

Ընկերութեան հերթական ժողովները հնարաւորութիւն կտան ուսումնասիրելու իւրաքանչիւր խնդիր, բայց կարեւոր է, որ մեր վարչութիւնը ինքը հրմտալից կերպով դնէ սեղանի վրայ խնդիրների քննութիւնը և ձեռնարկութիւնների իրագործութիւնը, որպէսզի հերթական ընդհանուր ժողովներն էլ լինեն արդիւնաւէտ»:

Թէ ընկերութեան անդամները՝ մասնագէտներից և թէ ողջ ժողովը կատարեալ հաւանութեամբ է վերաբերում ընկերութեան ծրագրային այն պարզաբանութեանը, որ տալիս է նախագահը և զալիս են աւելացնելու ու շեշտելու մի բան՝ որ «Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնը միայն այն ժամանակ կլինի կենսունակ, երբ նա իր գործունէութիւնը կտարածի գիւղում և այդ կգնի ջօշափելի և գործնական հողի վրայ:

2. 1909/10 Թ. ՆԱԽԱՀԱՇԻԻԸ

Սրանից յետոյ ընդհանուր ժողովը անցնում է իր առաջիկայ գործունէութեան նախահաշիւին, որը կազմւում է այսպէս:

Մ Ո Ւ Տ Ք

1. Կովկասեան գեմատւային գումարից . . .	500 ռ.
2. Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական Խորհ. 1000 »	
3. Նպաստամատոյց յանձնաժողովից և ուրիշ նւիրատութիւններից	1500 »
4. Զբօսանքներից և երեկոյթներից	600 »
5. Անդամակցական վճարներից	300 »
6. Տօրքերից և գործւածքներից	50 »
7. Հրատարակութիւններից	50 »
	<hr/>
	Ընդամենը. 4000 »

Ծ Ա Խ Ք

1. Բնակարանի, ծառայի, վառելիքի	450 ռ.
2. Վարպետուհիներին	360 »
3. Քարտուղարին	500 »
4. Գիւղական արհեստանոցներին Արագածի շրջանում	1000 »
5. Արարատեան դաշտի գիւղերի համար	400 »
6. Հրատարակութիւնների համար (ձեռնարկներ, տեղեկագիր, արձանագր. տպելու)	350 »
7. Տորքեր և գործիքներ պատրաստելու	240 »
8. Գիւղատնտեսական ձեռնարկութիւնների.	420 »
9. Գրադարան կազմելու	100 »

Հնդամներ. 4000 ռ.

Այս նախահաշիւը ընդունւեց երկու ծանօթութիւններով, այն է՝

- ա) Մի յօդաձից գումարները կարող են փոխադրւել դէպի միւսները.
- բ) Մուտքը աւելացած դէպքում կարելի է ծախսել նոյն պէտքերի վրայ:

3. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ:

Աչքի առաջ ունենալով, որ ընկերութեան կանոնադրութիւնը հիմնաւորապէս փոփոխւել էր և ընկերութեան առաջ դրւած էին նոր նպատակներ, որոնց համար հարկաւոր են նոր ոյժեր, վարչութիւնը իր ողջ կազմով հրաժարւում է պաշտօնից և առաջարկում է կատարել նոր ընտրութիւններ:

Հնդհանուր ժողովը, առանց քւէարկութեան և միաձայն, ընկերութեան նախագահի պաշտօնի համար ընտրում է ընկերութեան հիմնադիր Ալ. Քալանթարին, իսկ վարչութեան միւս անդամների և փոխանդամների ընտրութիւնը կատարում է տուփերով:

Հնարւում են՝ վարչութեան անդամներ տ.տ. Հայկանուշ Մարտիրոսեան, Հեղինէ Աւթանդիլեան և Նինա Դուրխանեան, պ.պ. Յարութիւն Փիրայեան (գիւղատնտես), Աշոտ Աթանասեան (գիւղատնտես) և Յակոբ Մէլիք-Բախտամեան (գիւղատնտես):

Փոխանդամ (առանց քւէարկութեան) տ. Հ. Լալայեան և պ.պ. Արշալոյս Մխիթարեան (մեղաբոյժ), Բախշի Աղասարեան (բժիշկ) և Անդրէաս Բարխուղարեան (մեղաբոյժ):

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամներն ընտրւում են՝ Աւետ. Վարդապետեան, Սարգիս Խարազեան և Աղ. Մէլիք-Այվազեան:

Յունիսի 1-ի վարչական նիստում վարչական պաշտօնները բաժանւում են անդամների մէջ այսպէս:

- Նախագահ՝ Ալ. Քալանթար:
- Փոխ-նախագահ՝ Յար, Փիրայեան:
- Գանձապահ՝ տիկ. Հ. Մարտիրոսեան:
- Քարտուղար՝ Աշ. Աթանասեան:

- Անդամներ {
- Տիկ. Հեղ. Աւթանդիլեան:
- » Նինա Դուրխանեան:
- Պ. Յ. Մելիք-Բախտամեան:

Նոյն ժողովում վարչութիւնը, աչքի առաջ ունենալով ընդհանուր ժողովի ցանկութիւնն ու որոշումը, Ա. Աթանասեանին ընտրում է ընկերութեան քարտուղար, նշանակելով նրան ամսական յիսուն ըուբլի վարձատրութիւն:

4. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՒԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ:

Վարչութիւնը աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ամառը ընկերութեան անդամների մեծ մասը բացակայում է թիֆլիսից, ուրեմն դժւար է ընդհանուր ժողովներ գումարել, նաև այն, որ ընկերութիւնը իր գործունէութիւնը տարածելու է գաւառներում, և այդ նպատակի համար ամառը համարելով ամենալաւ սեզօն, մի

շարք նիստերում ծրագրում է իր անելիքը, որոնք և ձևակերպւում են հետևեալ կերպով:

1) Պահել (հսկել) ընկերութեան այն կրթական շուկահանոցները, որոնք մինչ այդ բացւած էին զանազան գիւղերում:

2) Նպաստամատոյց Յանձնաժողովի տւած նպաստով բացել Արագածի գիւղերում շուկահանութեան մի քանի արհեստանոցներ:

3) Բացել Ղարաքիլիսայում կողովադորութեան կուրսեր՝ հրաւիրելով դրա համար մի վարպետ:

4) Օգտւելով այն հանգամանքից, որ Ղարաքիլիսայում լինելու է կառավարութեան հաշուով կաթնատնտեսութեան կուրսեր, ուր գալու են գիւղական դպրոցների ուսուցիչներ, կազմակերպել գիւղատնտեսական զանազան ճիւղերից դասախօսութիւններ և զրոյցներ՝ Ղարաքիլիսայի մեր ընկերութեան ճիւղի մէջ:

5) Կատարել մի շարք ճանապարհորդութիւններ մեր երկրում՝ ա) ծանօթանալու համար զանազան շրջանների գիւղատնտեսական և տնայնագործական կարիքների հետ, բ) հիմնելու գիւղերից մի քանիսում ցուցադաշտեր և գ) այցելել ընկերութեան բացած կամ նպաստած կրթական շուկահանոցները:

Վարչութիւնը իր յուլիս 11-ի նիստում աչքի, առաջ ունենալով, որ վարչութեան անդամներից շատերը հեռանալու են Թիֆլիսից և որ անհնար է լինելու ամառայ ամիսներում վարչական կանոնաւոր նիստեր կայացնել, որոշեց՝ լիազօրել ընկերութեան նախագահին և քարտուղարին միասին վարել վարչական գործերը, համաձայն այն ծրագրի, որ գծել էր նա իր համար և կազմած նախահաշի, մինչև սեպտեմբեր 15-ը, պահելով իրանց արածների մասին արձանագրութիւններ:

5. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ (ԹԻՖԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ:

Վարչութիւնը մի տարւայ ընթացքում ունեցել է 32 վարչական նիստ, որոնց մէջ քննւել են՝ վարչական զանազան հարցեր, կազմւել են առաջիկայ ընդհանուր ժողովների օրակարգը, դասախօսութիւնների և գեկուցումների կազմակերպման հարցերը, ընդունել են իրեն գիմոդներին, կազմւել են խորհրդակցութիւններ՝ հրաւիրւած անձերի մասնակցութեամբ և այլն:

Վարչական նիստերին այցելել են՝

Քալանթար Ալ.	32	անգամ
Աթանասեան Աշ.	30	»
Փիրալեան Յար.	4	»
Մէլիք-Բախտամեան Յակ.	18	»
Տիկ. Աւթանգիլեան Հ.	10	»
» Դօլուխանեան Ն.	19	»
» Լալայեան Հ.	16	»
» Մարտիրոսեան Հ.	10	»
Բժ. Աղասարեան Բ.	18	»
Բարխուդարեան Անդ.	15	»
Մխիթարեան Արշ.	1	»

Վարչական ժողովները տեղի են ունեցել շաբաթւայ մէջ որոշ օրերում՝ նախագահի մօտ—նրա գրասենեակում, «Գիւղատնտես»-ի խմբագրատանը, տիկ. Մարտիրոսեանի մօտ՝ նրա տանը, իսկ մեծ մասամբ՝ Թիֆլիսի Հայոց Ազգազրական Ընկերութեան դահլիճում, որոնց և վարչութիւնս յայտնում է իր առանձին շնորհակալութիւնը:

ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Վարչութիւնը ամբողջ տարւայ ընթացքում, ի բաց առեալ ամառային երկու ամիսները, ունեցել է տասն եւ չորս ընդհանուր ժողովներ, որոնցից 11-ը Կովկասեան Կայսեր. Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում, մի անգամ

«Գիւղատնտես» խմբագրատանը և երկու անգամ էլ կովկ. Հայոց Բարեգործ. Հնկերութեան դահլիճում:

Հնդհանուր ժողովների ժամանակ կատարել են գեղուցումներ հետևեալ նիւթերի մասին.

Հայանթար Ալ.

- 1) Զրի մատակարարութեան և ոռոգման խնդիրներ:
- 2) Ալպեան տնտեսութիւն:
- 3) Զեմստվոների էութիւնը:
- 4) Գիւղատնտեսական գիտութիւններ տարածելու եղանակները:
- 5) Գիւղատնտեսական դպրոցների տիպերի մասին:
- 6) Ցուցադաշտերի և փորձադաշտերի դերը:
- 7) Ցխինւալի արհեստանոցը:
- 8) Դաւթեան գիւղատնտեսական գումարի գործադրութեան առթիւ:

Աթանասեան Ա.

- 9) Զեմստվոների գիւղատնտեսական գործունէութիւնը:
- 10) Սերմացուի նշանակութիւնը երկրագործութեան թեան մէջ:
- 11) Զեմստվոյի տնտեսական դերը և փոքրամասնութեան ներկայացուցչութեան հարցը կովկասեան գեմստվոյում:
- 12) Շիրակի շրջանում կատարւած երկրագործական գործիքների ցուցադրութիւնները:
- 13) Մի պտոյտ Ղազախի գաւառում:
- 14) Գր. Կիրակոսեան—էջմիածնի հողերի ոռոգման հարցը:
- 15) Կ. Մելիք-Շահնազարեան—էջմիածնապատկան հողերի ջրի իրաւունքը և ոռոգումը:
- 16) Մալխասեան Ստ.—Բամբակագործութեան փորձեր նոր-Աւանում:
- 17) Ռայզման—Հողմաշարժ մեքենաները գիւղատնտեսութեան մէջ:

18) Տարատինով Ն.—Բամբակագործութեան ճշնաժամը և դրա պատճառները:

19) Կ. Մելիք-Շահնազարեան—Բամբակագործութեան պայմանները Անդրկովկասում,

20) Մելիք-Բախտամեան Յակ.—Կաթի մատակարարութիւնը:

21) Խարազեան Գ.—Գինեգործական կարիքները մեզանում:

22) ԱՓրիկեան Կոստ.—Պտղաբուծութեան դրութիւնը Անդրկովկասում:

23) Մխիթարեան Արշ.—Մեղաբուծութիւնը և նրա կարիքները:

24) Սարաճեան Օն.—Թռչնաբուծութիւնը արտասահմանում և մեզանում:

25) Տէր-Գրիգորեան Գր.—Կաթնատնտեսական փորձեր Շիրակի շրջանում:

26) Թումանեան Ար.—Ղազախի գիւղատնտեսական դպրոցի բաժանմունքի գործունէութիւնը:

27) Տէր-Պողոսեան—Խոզապահութիւնը մեզանում:

28) Փիրալեան Յար.—Տնայնագործական Պետերբ. համալուծարը և նրանում յարուցւած խնդիրները:

29) Աղասարեան Բ. ըժ.—Մածնի բժշկական և արդիւնագործական նշանակութիւնը:

30) Գէնջեան Օլգա տ.—Գիւղատնտեսական փորձեր Ախալցխայի. Մուրղութ գիւղում:

Բացի այս գեղուցումներ եղել են մանր գեղուցումներ հերթական խնդիրների մասին, որոնց շուրջ ընկերութեանս մէջ լինում էին մտքերի փոխանակութիւններ:

Մօտ 5 գեղուցում զանազան պատճառներով մնացել են չկարգացւած:

Հնկերութեանս ընդհանուր ժողովները գրաւում էին բացի անդամներից, կողմնակի հիւրեր, մեծ մասամբ գաւառներից, երբեմն նաև Տաճկաստանից: Յաճախորդների թիւը եղել է 35—130: Մի քանի գեղուցումների ժա-

մանակ եղել են դեմոնստրացաներ—տնայնագործական գործաքնների, մրգերի, գինիների, սեպարատորի, սրսկիչների և հողմաշարժ մեքենայի մօդելի:

Ընդհանուր ժողովի ընտրութեամբ ընկերութիւնս, յանձին իր վարչութեան անդամների և ընդհանուր ժողովից ընտրւած անձանց, մասնակցել է:

ա) Յունիսի 17-ին Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի ընդունելութեանը և ներկայացել է ողջ կազմով ողջունելու նրան:

բ) Գեղտեմբերին ողջունել է «Մոսկւայի համառուսական բժիշկների և բնագէտների» համաժողովի բացումը և միջնորդել, որ հետևեալ համաժողովը լինի Թիֆլիսում:

գ) Նոյեմբերի 21-ին մասնակցել է ընկերութեան նախագահ Ալ. Քալանթարի երեսնամեայ գիւղատնտեսական գործունէութեան յօբելեանին:

դ) Փետրւարին՝ Պետերբուրգի Համառուսական Տնայնագործական Համագումարին:

ե) Նոյեմբերի 17-ին Կովկասի գիւղատնտեսների Թիֆլիսի համագումարի բացմանը:

6. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

ա) Զուլհակութեան կրթական արհեստանոցներ

Հաշւէտութեան տարւայ մէջ և նրանից առաջ ընկերութիւնը բացել է կամ օժանդակել կրթական շուլհականոցներին հետևեալ գիւղերում.

- 1) Աշտար, 2) Պարնի գիւղ, 3) Մունջուղու, 4) Քեշիշքեանդ, 5) Հաջի-Սալիլ, 6) Տանագիրմազ, 7) Արբի-Դահրման, 8) Աղղուլա, 9) Գեօզալդարա, 10) Չօճկան և 12) Մանթաշապատ. բացի դրանցից շուլհականոցներ եղել են ընկերութեանս հետևեալ ճիւղերին կից. 1) Համամլիի, 2) Արաբքիլիսայի, 3) Օշականի, 4) Գեօմուրի, 5) Յիսիւլայի, 6) Գանձակի և 7) Մուրղութի. ուրեմն ընկերութիւնս 1908- 1911 թիւը բացել, նպաստել և կամ ղեկավարել է

տասնեւինը կէտերում շուլհակութեան արհեստանոցներ:

Արհեստանոցների մեծ մասում վարպետները կամ վարպետուհիները եղել են այն անձինք, որոնք սովորել են այդ արհեստը ընկերութեանս Թիֆլիսում, 1906—7—8 թ. պահած արհեստանոցում:

Գաւառներում գտնւած արհեստանոցները, որպէս կրթական հաստատութիւններ, ունեցել են ժամանակաւոր բնակարաններ, դրանցում սովորել են աղջիկներ՝ 10 տարեկանից մինչև 15—16-ը, եղել են նաև ամուսնացած կանայք: Արհեստանոցներ յաճախող աշակերտուհիների թիւը եղել է փոփոխակի, նայած թէ տարւայ որ ժամանակին է բացւած, այնտեղ սովորել են 7—20 աշակերտուհիներ: Մի քանիսի գոյութիւնը տևել է ընդամենը 3—4 ամիս. կան արհեստանոցներ, որոնք գործում են հիմնարկութեան օրից, ինչպէս օրինակ Գանձակի ճիւղի արհեստանոցը:

Շնորհիւ այն բանի, որ վարչութիւնս չունի արհեստանոցներում սովորած և սովորող աշակերտուհիների ցուցակը, չենք կարող ասել թէ դրանցում սովորածների ընդհանուր թիւը ինչքանի է հասնում, յամենայն դէպս ըստ ունեցած տեղեկութիւնների, բոլոր 19 արհեստանոցներում շուլհակութիւն են սովորել 120—150 աշակերտուհիներ:

Արհեստանոցներում սովորել են գործել թէ բրդեղէն և թէ բամբակեղէն զանազան տեսակի գործաւորներ, որոնք քանիցս ցուցադրւած են եղել և դրանց մի մասի նմուշները մտել են վարչութեանս կազմած ալբոմների մէջ:

Շնորհիւ մի կողմից պատրաստ թելի, նրա մանւածքի թանգութեան, տեղական մանարանների բացակայութեան, ապրանքների սպառման գործի անկազմակերպ դրութեան, շուլհակութիւնը չի կարողացել խոր արմատներ զցել ժողովրդի մէջ: Մի քանի տեղերում շուլհակութիւն սովորողները գնել են տորքեր, տարել իրենց տները և գործում են տներում իրենց կամ վաճառքի համար:

Եւ անա աչքի առաջ ունենալով այդ պայմանները, վարչութիւնս 1911 թւականին խոյս է տւել նոր արհեստանոցներ բացելուց և իր գործունէութեան գլխաւոր ուշադրութիւնը դարձրել է գիւղատնտեսական մասի վրայ:

ը) Կողովագործութիւն

Արհեստներից, բացի ջուլահկութիւնը, վարչութիւնս ուշք է դարձրել նաև կողովագործութեան վրայ, թէ հասարակ և թէ աւելի բարդ հիւսւածքների, որպիսին է բամբուկից գանազան իրեր շինելը:

Այդ նպատակով, անցեալ 1909 թւի ամառը, նա Ղարաքիլիսա գիւղում բացեց կողովագործութեան ամառային կուրսեր, ուր 15—20 հոգի, երկու ու կէս ամիս շարունակ հմուտ վարպետի պ. Ստրշնիցկու ղեկավարութեամբ սոսովորում էին փայտէ հիւսւածքների արհեստը, այդ նրպատակի համան որպէս նիւթ գործածելով թէ բերովի ուռենիներ և թէ տեղականը, որպէս և մի տեսակ ճահճային բոյս, որ բուսնում է Աբարանապօլում:

Բացի դրանց, վարչութիւնս փորձեր է անում պ. Գուլիշամբարեանի տւած նպաստով բացել է Յիսենվալ գիւղում մաշիկի արհեստանոց, իսկ Աստապատ գիւղում մտածում է Սուքիաս եպիսկ. Պարգեանի խոստացած 500 գումարով զարկ տալ նաև բրուտագործութեանը:

7. ԳԻԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ընկերութիւնս հաշւետւութեան տարում ունեցել է հետևեալ տեղերում ճիւղեր.

- 1) Համամիլի, 2) Ղարաքիլիսա, 3) Օշական, 4) Գեօմուր, 5) Գանձակ, 6) Յուրղութ, 7) Յիսենվալ, 8) Ձաքաթալա. 9) Գանձայ և 10) Ալէքսանդրապօլ:

Պէտք է խոստովանել, որ այդ տասը ճիւղերից մի քանիսը մի տարւալ ընթացքում ինքնուրոյն գործունէութեան շատ թոյլ նշաններ են տւել և այդ այն պատճառով, որ տեղական վարչութիւնների մէջ չեն եղել մաս-

նագէտ մարդիկ, որոնք կեանք և եռանդ մտցնէին տեղերում, իսկ իրենք ճիւղերը չեն աշխատել և միջոց էլ չեն ունեցել այդպիսի մարդկանց հրաւիրել, առաջ քաշել: Ունենալով այս բոլորը աչքի առաջ, վարչութեանս գլխաւոր հոգսը եղել է ունենալ գոնէ մի շրջիկ գիւղատնտես, որը շրջէր ճիւղերը, կազմէր ժողովներ, ցուցադրութիւններ, կարդար դասախօսութիւններ, զրոյցներ, տար դիմողներին խորհուրդներ, ցուցմունքներ:


Այս նպատակին ընկերութիւնս հասել է միայն մասամբ, այն է 1909 թւականներում, օգտւելով Ղարաքիլիսայի ամառային կուրսերից, նա կազմակերպել է այնտեղ և այլ տեղերում հետևեալ զրոյցներն ու դասախօսութիւնները.

ա) Զրոյցներ եւ դասախօսութիւններ:

Ղարաքիլիսայում:

1. Քալանթար Ա. Կաթնատնտեսութեան մասին, (յուլիսի 7-ին):
2. » Կաթնատնտեսութեան և անասնապահութեան փոխադարձ կապը, յուլիսի (1-ին և 7-ին):
3. Աթանասեան. Գիւղական ուսուցչի դերը գիւղատնտեսական կատարելագործութիւնների ինդրում, (յուլիսի 6-ին):
4. Բարխուդարեան. Շրջանակաւոր մեղաբուծութեան առաւելութիւնները, (յուլիսի 6-ին):
5. Քալանթար. Մեր երկրի անասնապահական կարիքները, (յուլիսի 6-ին):
6. » Փամբակի շրջանի պարտիզպանութեան զարգացման հարցը:
7. Աթանասեան. Հողը և նրա մշակութեան գործիքները:
8. Քալանթար. Կաթնատնտեսական մասնաւոր ձեռնարկութիւնների կազմակերպութիւնը, (յուլիսի 25-ին):
9. » Անասնապահութեան կապը գիւղատնտեսութեան մէջ, (յուլիսի 26-ին):
10. » Հողի պարարտացման նշակութիւնը:

2013-99 (19-96)



- 11. Վերջինին. Հաւերի և թռչունների տեսակները և դրանց խնամելու մասին:
- 12. Ափրիկեան Կ. Արդիւնաբերական պաղարուծութիւն և ծառերի տեսակների մասին:
- 13. Քալանթար Ա. Կաթի արդիւնաբերութիւնը և նրա նշանակութեան մասին:
- 14. Վերջինին. Թռչունի արհեստական եղանակով ճուռ հանելը և նրանց խնամատարութիւնը:
- 15. Աթանասեան Ա. Ցանքսը. շաղացանքս և շարքացանքեր:
- 16. Աֆրիկեան Կ. Ի՞նչ տեսակ պտղատու ծառեր են հարկաւոր Փամբակին:
- 17. Քալանթար Ա. Կաթի արդիւնաբերութիւնը և նրա նշանակութիւնը, (օգոստոսի 2-ին):

Ղշլաղ գիւղում

- 18. Աթանասեան. Ցէլի նշանակութիւնը բերքի համար, յուլիսի 7-ին:
- 19. Սողոմոնեան Մ. Սերղատների առաւելութիւնը կաթնատնտեսութեան մէջ, (յուլիսի 7-ին):

Ալեքսանդրապոլում

- 20. Աթանասեան Ա. Հողի մշակութիւնը և մշակութեան գործիքները, (ապրիլի 21-ին):
- 21. » Հողի պարարտացումը և նրա ազդեցութիւնը զանազան կուլտուրաների վրայ:
- 22. Քալանթար Ա. Լեռնային շրջանի գիւղատնտեսական կարիքներ, (ապրիլի 22-ին):
- 23. Բարխուդարեան. Մեղունների կեանքը, (21 ապրիլի):

Համամլիում

- 24. Աթանասեան Ա. Նոր գութանի առաւելութիւնները, (ապրիլի 26-ին):

Գանձակում

- 25. Քալանթար Ա. Մեր երկրի գիւղատնտեսական կարիքները և գեմատիօն, (նոյեմբերի 29-ին):

- 26. Աթանասեան. Այգեգործութեան թշնամիները և նրանց դէմ կուելու միջոցները, նոյեմբերի 29-ին:
- 27. Ղլէչեան. Գինեգործութեան ճգնաժամի պատճառները Գանձակում, (նոյեմբերի 29-ին):
- 28. Քալանթար. Կաթնատնտեսական գործի կազմակերպութիւնը:
- 29. Ղլէչեան. Մնկային հիւանդութիւններ և դրանց բժշկելը:
- 30. Աթանասեան. Պտղատու այգու խնամքը և կոիւ այգու փասատուների դէմ:

ը) Գութանների եւ այլ գործիքների փորձեր ու ցոյցեր գաւառում:

Վարչութիւնը անցեալ մի տարւայ ընթացքում կազմակերպել է հետևեալ ցոյցերն ու փորձերը:

Ղ ա Ր ա ք ի լ ի ս ա յ ու մ փորձել է Գէնի, Էկկերտի, Սակկի և տեղական գութանները (6-ի յուլիսի) ներկայութեամբ բազմաթիւ գիւղացիների և կողմնակի հետաքրքրուողների:

Ղ շ լ ա ղ ու մ՝ Գէնի, Էկկերտի, Սակկի և Ղամբարեանի գութանները—ներկայութեամբ գիւղացիների:

Ա լ ե ք ս ա ն դ Ր ա պ օ լ ու մ (21—22-ին ապրիլի)

1) Գէնի Էկկերտի, Աքսայ, Վերմկէ, Ճրանց-Շտեֆանի և տեղական (Վօլօնցօլի) միախոփ և երկխոփ գութանները:

2) Է կ կ եր տ ի, Շտեֆանի և տեղական ցաքանները:

3) Բուղօլֆ Սակկի ձեռնաշարժ շարքացանը, և Պէրֆէկտ սերգարտը:

Ղ զ լ շ ա խ չ ա խ ու մ. Գէնի № 5 և 6 գութանները, Էկկերտի երկմաս ցաքանը:

Ք ա Ր Լ ա ն ս ա Ր ա յ ու մ. Վերմարէլի սրակիչը և ծրծմբացիլ փուքսը, Բլիւմէնթալի փոշի շրդանը և նրանով պանիր մայելը:

Բացի դա մասնագէտներ պ. պ. Մ. Սողոմոնեան,

Չարիֆեան, Թամամշեան, Ա. Մակարեան և Գ. Տէր-Գրիգորեան կատարել են մի շարք կաթնատնտեսական դեմօնստորացիաներ: Վարչութիւնս յայտնում է իր անկեղծ շնորհակալութիւնս այդ պարոններին:

գ. Յուցադաշտեր եւ փորձնական սերմեր:

Ընկերութիւնը, ցանկանալով գիւղացի ազգաբնակութեանը ծանօթացնել գիւղատնտեսական մի շարք սերմերի հետ, նպաստել է «Գիւղատնտես» շաբաթաթերթին. և սա այդ նպաստով իր բոլոր բաժանորդներին (910) ուղարկել է վեցշատ դարի և տիմոֆէկկա խոտ, իսկ առաջիկայ աշնանը ուղարկելու է ցորեն և շաբդար երեքնուկից: Միաժամանակ, ցանկանալով փորձել խոտաբուծութիւնը, ուղարկել է հետևեալ գիւղերին խոտի սերմերի ժողովածու կազմած՝ կարմիր, շվեդական և սպիտակ երեքնուկից, կօստերից, եօժից, տիմօֆէկկայից՝ իւրաքանչիւրից 12 ֆունտ- 300 քառ. սաժենի համար, Համամլու, Պարնի գիւղ, Նոր-Աւան, Քարւանսարա, Գանձա, Ղարաբուլաղ, Քեշիշքեանդ, Յուրդութ, Ղչաղ, Ուզունթալա և Շամշաղին:

դ. Շերամի սերմի քաժանումը:

Լսելով Գանձակի ճիւղի դիմումը, որ գիւղացիները կարիք ունին լաւ և քննւած շերամի սերմի, ուղարկել է ճիւղին քսան տուփ շերամի սերմ մի մասը ճրի, միւս մասը դրամով տարածելու:

ե. Գիւղատնտեսական հրատարակութիւններ:

Իեռ անցեալ տարի, իմանալով որ Բորչալուի շրջանում եղջիւրաւոր անասունների մէջ դաբաղ (ящурь) հիւանդութիւնը մեծ աւերումն է անում, վարչութիւնը տրպազրել է 1. 1000 օր. «Դաբաղ և նրա բժշկութիւնը» թոուցիկը, որը և «Գիւղատնտես»-ի միջոցաւ տարածել գիւղերում: 2. Հրատարակել է Ռէօմէրի «Գիւղատնտեսական թուչնաբուծութիւն» պատկերազարդած ձեռնարկը 1000

օրինակ: 3. Նպաստել է յիսուն ըուբլով «Գիւղատնտես» շաբաթաթերթին: 4. Տպագրել է և «Գիւղատնտեսի» բոլոր բաժանորդներին ցրել է ընկերութեան ընդհ. ժողովների արձանագրութիւնները», որով հնարաւորութիւն է տւել ազգաբնակութեանը ծանօթանալու այն գեկուցումների հետ, որ կարդացել են ընդհանուր ժողովներում: 5. Տպագրութեան է տւել «Խոտաբուծութեան», «Հողի պարտացման» և «Բանջարաբուծութեան» մասին ձեռնարկներ, որոնք լոյս կտեսնեն այս ամառ:

զ. Խորհուրդներ, ցուցմունքներ

Աչքի առաջ ունենալով որ զանազան տեղերից վարչութեանս դիմել են գիւղատնտեսական և տնայնագործական դիմումներով, խորհուրդներով և ցուցմունքներով, յանձնել է քարտուղարին մասնաւոր նամակներով բաւարարել դիմողներին: Տարւայ ընթացքում այդ ուղղութեամբ 80-ից աւելի դիմողներին նամակներ են գրւել, չհաշւած բերանացի դիմումներին բաւարարելը, որ արել են ընկեր. նախագահը, քարտուղարը և վարչութեան միւս մասնագէտ անդամները:

է. Թուչնաբուծական կայարան եւ ձեռքի մատակարարում:

Վարչութիւնս աչքի առաջ ունենալով այն կենդանի հետաքրքրութիւնը, որ ցոյց էր տալիս ազգաբնակութիւնը դէպի թուչնաբուծութիւնը, նաև այն, որ ազնիւ տեսակի թուչնաներ և ձւեր ձեռք բերելը հեռու տեղերից շատ թանկ է նստում և շատ անգամ փչանում են տեղափոխութիւններից, այս տարի ապրիլից նպաստեց պ. Անդր. Բարխուդարեանին, որ սա ձեռք բերի մինօրկա և իտալական ձւաբեր տեսակների մի քանի ընտանքներ և մեծացնելով այնտեղ, բաժանի դրանց ձւերը համեմատաբար չնչին (5 կոպ.) գնով, իսկ ընտանիքները՝ 3 ըուբլով, դիմողներին. կայարանը մայիսից բացւած է և, թէ ձւերի և թէ թուչնաների ընտանիքների մատակարարումը ըսկւած է:

Բացի դա վարչութիւնս պ. Տէր-Օհանեանից գնել է՝ մօտ 150 իտալական տեսակի ձւեր և բաժանել է Ալէքսանդրապօլում:

Այդ կայարանի մասին յայտարարութեան միջոցով տեղեկացած է հասարակութեանը:

ը. Մեղաբուծական կուրսեր

Ցանկանալով նպաստել կանոնաւոր մեղաբուծութեան տարածմանը, վարչութիւնս դիմել է մեղաբոյծներ՝ պ. պ. Ա. Բարխուդարեանին, Արշ. Մխիթարեանին և Ս. Զօհրաբեանին, և դրանց մեղաբուծարաններում՝ Շահագի կայարանին կից, Ուզունլար գիւղում և Գլղան գիւղում բացել է մեղաբուծական կուրսեր, ուր ցանկացողներ որոշ վճարով և յայտնի ծրագրով կարող են թէ գործնականապէս և թէ տեսականապէս սովորել մեղաբուծութիւնը:

Աչքի առաջ ունենալով, որ փթում (ГНИМЦЪ) հիւանդութիւնը սպառնում է մեղաբուծութեանը, վարչութիւնս, չունենալով դրամական միջոցներ ինքը իր ինստրուկտոր ունենալու, դիմել է Շերամապահ. Կայարանին և խնդրել է ուղարկել մի մասնագէտ Լոռի-Փամբակի և Շիրակի շրջան՝ ցոյց տալու այդ շարիքի դէմ կուելու միջոցներ: Շերամապահ. Կայարանը մասնագէտ պ. Գորբաչեին ուղարկել է շրջագայելու և ցուցմունքներ տալու:

Թ. Շրջիկ ինստրուկտորի հարցը:

Վարչութեանս ամենամեծ հոգանքից մէկը եղել է շրջիկ գիւղատնտես ունենալը, որի պարտականութիւնը լինէր՝ շրջել գիւղեր, բացել նոր ճիւղեր, օգնէր ճիւղերին կենդանի գործունէութիւն ցոյց տալ, հսկէր ցուցադաստերին, բացէր նորերը, կարդար զրոյցներ, դասախօսութիւններ, կազմակերպէր գործիքների փորձեր և այլն, մի խօսքով կենդանի և շարժուն ուսուցչի, խորհրդատւի և ղեկավարի դեր ստանձնէր:

Այդ նպատակը գլխովին և իր ժամանակին իրագործել վարչութիւնս անկարող եղաւ, շնորհիւ նիւթական, հաստատ միջոցների բացակայութեան, ուստի և որոշեց այս ամառայ ընթացքում այդ գործը յանձնել Ընկեր. քարտուղար Ա. Աթանասեանին. որը և ապրիլի 20-ից պաշտօնավարում է, կազմակերպել է գութանների և չաքանների փորձեր Ալէքսանդրապօլում և Ղզլախախում, մայիսի 10—14ը Ղազախի գաւառի Քարանսարա գիւղում կարդացել է զրոյցներ, ցոյց է տւել է ծառերի բրժշկութեան եղանակներ, բաժանել է պանրի շիճուկ և այսուհետև յունիս, յուլիս և օգոստոս ամիսներում շարունակելու է իր ինստրուկտորական գործունէութիւնը Ալէքսանդրապօլի, Ախալքալաքի, Բօրչալի, Ղազախի գաւառներում:

8) ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԲԱՅԱՁԷՏԻ ԳԱՒԱՌՈՒՄ ԱՐԱԳԱՍՈՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Յուլիսի 25-ից Ընկերութեան նախագահ Ա. Քալանթար և քարտուղար Ա. Աթանասեան ձեռնարկում են մի ճանապարհորդութիւն դէպի Դիլիջան, Ելինովկա, Ուչույուղու, Ծաղկաձոր, Աբարան, Արագածնոտի շրջան և այդտեղից Փամբակ ծանօթանալու Ընկերութեան բացած ջուհականոցների հետ, այցելելու գիւղատնտեսական մի քանի տնտեսութիւններ: Այդ ճանապարհորդութիւնը տևում է ութ օր և, օգտւելով իրենց այցելութիւններից մի քանի գիւղում կազմում են զրոյցներ, տեսնում և ցուցմունքներ են տալիս ջուհականոցներին, ծանօթանում են տեղական կարիքների հետ, որոնց մէջ հողմաշարժ աղօրիքի պահանջը ստանում է առաջնակարգ նշանակութիւն: Օգոստոսի 1-ին աւարտելով շրջագայութիւնը վերադառնում են Թիֆլիզ: Այս ճանապարհորդութիւնը առիթ դարձաւ Ընկերութեան մէջ մի քանի զրոյցների՝ արծարծելու կանոնաւոր կաթնատնտեսութեան, ցեղական

համայնապատկան ցուլի, հողմաշարժի, սերմերի ախտահանութեան խնդիրները:

Ղլչխախախ և Ալեքսանդրապոլ արած ճանապարհորդութիւնը այս տարի ապրիլի 21—24-ը առաջ քաշեց ի միջի այլոց նաև Շիրակում մեծ աւերմունք պատճառող առնէտների տեսակը որոշելու և կուլի միջոցներ փնտռելու գործին: Առնէտը, ըստ կենդանաբան Սատունիին, մի մեծ չարիք է այդ շրջանի համար, որի դէմ անհրաժեշտ է առնել կտրական միջոցներ: Նա կոչւում է Citellus Schmidti:

Յ) 1910 ԹԻԱԿԱՆԻ ՆԱԽՅԱՇԻԻ

Ձուրկ լինելով եկամտի մշտական և հաստատ աղբիւրներից և սպասելով Պետերբուրգի հայոց եկեղեցական Խորհրդի նպաստին, վարչութիւնս չկարողացաւ տարւայ սկզբի ընդհանուր ժողովին ներկայացնել իր նախահաշիւը, որը սակայն կազմւած էր, գլխաւոր գծերով հաղորդւած ընդհանուր ժողովին և, ամեն դէպքի համար ստանալով նրա համաձայնութիւնը, մասնակի կերպով գործադրում էր: Վերջապէս, երբ վարչութիւնս ապրիլի սկզբին ստացաւ Պետերբուրգի եկեղեցական Խորհուրդի գրութիւնը, որի մէջ ասւած էր, որ Խորհուրդը այս տարի նպաստում է մեզ 2000 ըուբլով, վարչութիւնս կազմեց հետևեալ նախահաշիւը, որը և ներկայացնում է ընդհանուր ժողովիդ ի հաստատութիւն:



ՅՈՒՑԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

Մշտական

1. Մարտիրոսեան տ. Հ. Գ.
2. Փրիդոնեան տ. Մ. Ի.
3. Զիլինգարեան Գ. Մ.
4. Վաչեանց

Ընկերութեան անդամներ

1. Իշխ.-հի տ. Մ. Թումանեան
2. Ա. Քալանթար
3. Հ. Առաքելեանց
4. Ա. Աթանասեանց
5. Յ. Մելիք Բախտամեանց
6. Գ. Աղաբաբեանց
7. Ա. Սուրէնեանց
8. Ս. Խարազեանց
9. ԲԺ. Աղասարեանց
10. Ա. Սարուխանեանց
11. Պր. Սարուխանեանց
12. Հ. Լալայեանց
13. Վ. Փափաղեանց
14. Ա. Տէր-Յակովբեանց
15. Վ. Զաղէթեանց
16. Ա. Տէր-Բարսեղեանց
17. Մ. Առուստամեանց
18. Ե. Աֆթանդիլեանց
19. Մ. Աֆթանդիլեանց
20. Վ. Եւանգուլեանց
21. Մ. Սվէչնիկով
22. տ. Տ. Ամբարդանեանց
23. Ե. Աֆթանդիլեանց
24. Դ. Մ. Յուրինեանց
25. տ. Դ. Յուրինեանց
26. Օ. Ալիխանյանց
27. Անդ. Բարխուդարեանց
28. Տէր-Խաչատրեանց
29. Ա. Վարդապետեանց
30. Ա. Վարդապետեանց

Ն Ա Խ Ա Ն Ա Շ Ի Ի

1910—1911 թվականի

Մ Ո Ի Տ Վ Յ		Ռուբ.	Ե Լ Վ Յ		Ռուբ.	Կ.
1.	Նպաստ Նպաստամատոյց Յանձնաժողովից *) .	1000	1.	Զուլհակութեան և Տնայնագործ. արհեստանոցների (Արարանապալում և այլ տեղերում) .	1500	—
2.	» Պետերբուրգի Հայոց Եկեղեց. Խորհրդից .	2000	2.	Ցուցադաշտեր կազմակերպելու, սերմեր զնելու, բաժանելու և փորձեր կազմակերպելու .	500	—
3.	» Զեմակի գումարներից **)	500	3.	Ինստրուկտորին չորս ամսւայ համար	400	—
4.	Կողմնակի նւէրներից	300	4.	Նպաստ «Գիւղատնտես»-ին	100	—
5.	Գիւղատնտեսակ. հրատարակութիւնների համար		5.	Գիւղատնտեսական գրքերի հրատարակութեանը .	900	—
	1) պ. Աստ. Վաչեանից	400	6.	Ընկ. քարտուղարին	600	—
	2) պ. Խ. Յովհաննիսեանից	517	7.	Գործավարին	120	—
6.	Անդամավճարներից՝ 100 անդամներից	300	8.	Ամառային կուրսեր և դասախօսութիւններ	400	—
7.	Զբօսանքներից, երեկոյթներից և այլ աղբիւրներից .	500	9.	Գրասենեակին և գրասենեկային ծախքեր (ընդհ. ժողովների համար դահլիճ, ծառաներին, արձանագր. տպագր. և այլն)	360	—
	Ընդամենը	5517	10.	1908 և 9 թվականների պարտքերի հատուցման	500	—
			11.	Գրադարանի և դեմոնստրացիաների գործիքների համար	137	—
				Ընդամենը	5517	—

*) Յատուկ գումար՝ տնայնագործութեան համար:
 **) » » » » »

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՃԻՒՂԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՏԵՂԵՐՈՒՄ

1. Համամլի,
2. Ղարաքիլիսայում,
3. Օշականում,
4. Գիւլոմորում,
5. Գանձակում,
6. Յուրղութում,
7. Յիւենովայում,
8. Զաքաթալայում,
9. Գանձակում և
10. Ալէքսանդրապոլում:

Իրանց վարչական կազմի և անդամների թւի մասին վարչութիւնս տեղեկութիւն ունի միմիայն մի քանիսնե-րից (Գանձակի, Ալէքսանդրապոլի, Զաքաթալայի) միւս-ներից տեղեկագրեր չեռ ևս չենք ստացել:

Այս տեղեկագիրը կարդացած, քննած եւ հաստատած է յունիսի 1-ի վարչական ժողովում—1910 թ.

Նախագահ Ընկերութեան՝ Ալ. Բալանթար

Փոխ նախագահ՝ Յ. Փիրալեան

Անդամներ } Հ. Ալթանդիլեան, Ն. Դոլուխանեան
 Վարչութեան } Յ. Մելիք-Բախտամեան

Քարտուղար Ընկերութեան՝ Ա. Աթանասեան

Հ Ա Յ Ի Ի

1. ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՏՆԱՅՆԱԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1906—7—8 թւերի

ԵՒ

2. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1909 թւի:

Հիմնարկութեան առաջին տարին 1906 թ.

	Մուտք		Ելք		Մնացորդ	
	բուք.	կ.	բուք.	կ.	բուք.	կ.
1. Դրամարկղ	1456	06	1437	66	18	40
2. Արհեստանոցի համար զանա- զան ծախսեր	—	—	162	34	—	—
3. Գործւածքներ պատրաստելու համար այլ և այլ նիւթեր	183	74	—	—	183	74
4. Գործիքներ պատրաստելու հա- մար այլ և այլ նիւթեր	35	12	—	—	35	12
5. Արհեստանոցի վարպետներին և ծառայողներին ոռճիկ	—	—	427	50	—	—
6. Շարժական կայք	203	98	—	—	203	98
7. Գանձակի ճիւղ	300	—	—	—	300	—
8. Արհեստանոցի վարձ	—	—	124	98	—	—
	2178	90	2152	48	741	24

Հիմնական դրամագրութիւն առ 1 յունու. 1907 թ. 741 ո. 24 կ.

Հիմնարկութեան երկրորդ տարի՝ 1907 թ.

	Մուտք		Ե Լ Ք		Մնացորդ	
	րուբ.	կ.	րուբ.	կ.	րուբ.	կ.
1. Դրամարկղ	2528	04	2528	04	—	—
2. Նւէլրներ և զանազան եկամուտներ	2045	79	—	—	—	—
3. 31 անդամներից անդամավճար	186	—	—	—	—	—
4. Գործւածքների նախապատրաստութեան զանազան նիւթեր	280	06	—	—	280	06
5. Գործիքներ պատրաստելու զանազան նիւթեր	268	25	—	—	268	25
6. Արհեստանոցի վրայ զանազան ծախսեր	—	—	350	18	—	—
7. Վարպետներին և ծառայողներին ոռճիկ	—	—	754	—	—	—
8. Շարժական կայք	304	97	—	—	304	97
9. Արհեստանոցի տան վարձ	—	—	499	92	—	—
	5613	11	4132	14	853	28

Հիմնական դրամագլուխ առ 1-ն յունւ. 1908 թ. 853 ր. 28 կ.

Հիմնարկութեան երրորդ տարին 1908 թ.

	Մուտք		Ե Լ Ք		Մնացորդ	
	րուբ.	կ.	րուբ.	կ.	րուբ.	կ.
1. Դրամարկղ	3427	44	1963	90	1463	54
2. Գաւառներում եղած արհեստանոցի ճիւղերը (բաժանմունքն.)	130	39	—	—	130	39
3. Ընկերութեանս երեք մշտական անդամներից	450	—	—	—	—	—
4. Նւէլրներ և այլ եկամուտներ	2546	78	—	—	—	—
5. 39 անդամների անդամավճար	234	—	—	—	—	—
6. Վարպետների և ծառայողների ոռճիկ	—	—	877	99	—	—
7. Շարժական կայք	164	55	—	—	164	55
8. Արհեստանոցի տան վարձ	—	—	208	30	—	—
9. Գործիքներ պատրաստելու զանազան նիւթեր	95	26	—	—	95	26
10. Գործւածքներ պատրաստելու զանազան նիւթեր	140	32	—	—	140	32
11. Արհեստանոցի վրայ այլ և այլ ծախսեր	—	—	473	48	—	—
	7188	74	3523	67	1994	06

Հիմնական դրամագլուխ 1908 թ. առ 1-ն յունւ. 1909 թ. 1994 ր. 06 կ.

	
	բուք.	կ.	բուք.	կ.
1. Դրամարկղ				
Դրամարկղում կանխիկ դրամ առ սոյն թիւ			1481	94
2. Գործիքներ				
Թիֆլիսում և բաժանմունքներում եղած գործիքներ առ սոյն թիւը			500	
3. Շարժական կայք				
Արհեստանոցի շարժական կայքը առ սոյն թիւ			265	—
			2246	94
Ընկերութիւնս 1907 թ. ունեցել է անդամներ 31 հոգի				
Ընկերութիւնս 1908 թ. ունեցել է անդամներ 39 »				
Մշտական անդամներ 1908 թ. 3 »				

Դրամարկղի շրջանառութիւնը 1909 թ.

	Մ Ո Ի Տ Ք			
	բուք.	կ.	բուք.	կ.
Մնացորդ առ 1 յունւ. 1909 թ.				
1. Նւէրներ եւ եկամուտներ.				
Տիկ. Մ. Ի. Փրիզոնովից	60	—		
Համամլի գիւղից	24	96		
Պարնի »	26	36		
Պետերբ. Հայոց Եկեղ. Խորհուրդից .	1000	—		
«Արամազդ» ընկերութիւնից	600	—		
Թիֆլիսի Փոխատու Վարկ. Ընկերութ. 1909 թ. մայիսի 24-ի դրօսանքից .	100	—	335	39
Ալիբէգեանից	200	—		
Գեօմուր գիւղից	30	—		
Զեմասուային միջոցներից	500	—		
Նպաստամատոյց Յանձնաժողովից .	1000	—		
Միրզոյկի ընկերութիւնից	50	—		
Գ. Մ. Զիլինգարեանից	100	—		
Ղուկասեանի ժառանգներից	100	—		
Մարգարեանից	20	—		
Իեկտ. 26-ին կայացած մանկ. երեկոյթից	133	06	4279	77
2. Յատուկ հաշիւներ.				
Դուլիշամբարեանից (Յիսինվալ գիւղ). .	700	74		
Բժ. Բուդուղեանից (Մուրղութ գիւղ). .	250	—		
Ա. Մանթաշեանից (Մանթաշապատ). .	343	95	1294	69
Փոխանցումն			7056	40

	րուբ.		կ.	
	րուբ.	կ.	րուբ.	կ.
Փոխադրեալ			7054	40
3. Փոխանցող զումարներ				
Տիկ. Հ. Մարտիրոսեանից փոխարինար .	493	53		
Խ. Յովհաննիսեանից	517	—	1010	53
4. Մասնաւոր եկամուտներ				
Գործւածքների ծախելուց	22	69		
Շարժականներ »	68	—		
Գրքեր	8	40		
Ընկերութեան 30 անդամներից	150	—		
Ընկ. 1 մշտական անդամից	100	—	349	09
			8414	02
Ծ Ա Խ Ս				
Արհեստանոցի վրայ այլ և այլ ծախսեր			619	86
» համար գործիքներ			538	45
Գործւածքների համար նիւթեր			573	24
Արհեստանոցի վարպետներին և ծառայողներին ուժիկ			1305	50
Տան վարձ			40	—
Գիւղատնտեսական գրքեր հրատարակելուն			318	16
Գաւառներում արհեստ. բաժանմուն-մունքներին			2457	43
Կովկ. տնայնագործ, յանձնաժող.			200	—
Փոխանցումն			6052	64

	րուբ.		կ.	
	րուբ.	կ.	րուբ.	կ.
Փոխանցումն			6052	64
Յատուկ հաշիւներ				
Ի հաշիւ Գիւլիշամբարեանի (Յիւրիւպալ)	760	10		
» ըժ. Բուդուղեանի (Մուրղութ)	170	02		
» Ա. Մանթաշեանի (Մանթաշ.)	478	44	1408	56
Գանձակի բաժանմունք			45	—
Զամբիւղագործութեան վրայ			167	15
			7673	35

Դրամարկղում մնաց առ 1 յունւ. 1910 թ. 742 ը. 67 կ.

ԱՏԿԻՒ

Հ ա շ Ի Լ

	ը ու ը		ը ու ը	
	ը ու ը	ը ու ը	ը ու ը	ը ու ը
1. Դրամարկղ				
Մնացորդ առ սոյն թւի			742	67
2. Շարժական կայք				
Շարժական իրեր առ սոյն թւի			200	—
3. Գործիքներ				
Գործիքներ առ սոյն թւի			500	—
4. Գործածքներ եւ նիւթեր առ ս. / թ.				
			50	—
5. Դրքեր				
Մնացած գրքեր առ սոյն թւի			50	—
			1542	67

Նախագահ Ընկեր. Ա. ՔԱՂԱՆԹԱՐ
 Փոխ նախագահ Յ. ՓԻՐԱԼԵԱՆ
 Գանձապահ Հ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Առ 1 յունւարի 1910 թ.

ՊԱՍՍԻՒ

	ը ու ը		ը ու ը	
	ը ու ը	ը ու ը	ը ու ը	ը ու ը
<i>Պահանջողներ (կրեդիտորներ)</i>				
1. Կովկ. Տնայնագ. Յանձնաժողով	53	20		
2. Տիկ. Հ. Գ. Մարտիրոսեան	493	53		
3. Խ. Յովհաննիսեան (շտեմարաններ ը ի գումար)	517	—	1063	73
Հիմնական ֆոնդ			478	94

Անդամներ { Ն. ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆ
 Հ. ԱԻԹԱՆԴԻԼԵԱՆ

ՃԻՄՈՒՄ

Առ I հատման 1910 թ.

Կատարող (հարկատեր)	Տարածք (մ. քա.)	Տարածք (մ. քա.)	Կատարող (հարկատեր)
1. Կապիտալի օգտին	88 30	88 30	
2. Քրիստոնեական հիմնադրամներ	88 30	88 30	
3. Առևտրական հիմնադրամներ	88 30	88 30	
4. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
5. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
6. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
7. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
8. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
9. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	
10. Կառավարության հիմնադրամներ	88 30	88 30	



100

14947